# Որակի քաղաքականություն

*«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ հանդիսանում է սերտիֆիկացման մարմին, որը մատուցում է ինչպես արտադրանքի, այնպես էլ կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծառայություններ:*

ORIGIN

*Կառավարման համակարգերի սերտիֆիկացման բաժնի առջև դրված նպատակն է հաճախորդներին մատուցել բարձրորակ, արդյունավետ ծառայություններ, որոնք հասանելի կլինեն ինչպես տեղական, ԵԱՏՄ տարածաշրջանի, այնպես էլ միջազգային սպառողների լայն շրջանակի համար: Մասնավորապես մեր նպատակն է.*

1. *Իրականացնել կառավարման համակարգերի սերտիֆիկացում ISO 9001:2015 և ISO 22000:2018 միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:*
2. *Իրականացնել կառավարման համակարգերի ներդրում և խորհրդատվություն միջազգային ստանդարտների (ISO, GxP և այլն) պահանջներին համապատասխան՝ պահպանելով ընկերության կողմից որդեգրված անկողմնակալության քաղաքականությունը (POL-003-00-00):*

*Հիմնական նպատակին հասնելու համար, «Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ ղեկավարությունը պարտավորվում է՝*

- *Շարունակաբար բարելավել ամբողջ ընկերության շրջանակներում կառավարման համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ ISO 9001:2015 և ISO 17021-1:2015 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան:*
- *Բավարարել բոլոր հաճախորդների պահանջները՝ առաջարկելով բարձրորակ, արդյունավետ և մատչելի ծառայություններ:*
- *Հաճախորդների պահանջների բավարարման համար ունենալ պրոֆեսիոնալ և հետևողական աշխատակազմ:*
- *Կատարելագործել սպառողի գոհունակության գնահատման մեխանիզմը և բողոքների վերլուծության համակարգը:*
- *«Սերտիֆիկացում և Որակ» ՍՊԸ աշխատակիցների համար ապահովել այս քաղաքականության ընկալումը:*

Հաստատված է՝

Տնօրեն _____ Գ.Ճաշչյան

«ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԵՎ ՈՐԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «2» ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱ
«СЕРТИФИКАЦИЯ И КАЧЕСТВО» ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ ЕРЕВАН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ «2» ГОСУДАРСТВЕННАЯ РЕГИСТРАЦИЯ
«CERTIFICATION AND QUALITY» LIMITED LIABILITY COMPANY YEREVAN REPUBLIC OF ARMENIA
00907112